



CHILDREN
OF ARMENIA
FUND



Մամուլի հաղորդագրություն
06. 07. 2020 թ.

ՔՈԱՖ-ը Լոռիում զբոսաշրջության զարգացման նպատակով դրամաշնորհի է արժանացել

Տեղական ժողովրդավարական գրասենյակների գործակալությունը ([ALDA](#)) և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) ստորագրեցին դրամաշնորհի համաձայնագիր «Քաղաքացիների ծայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի շրջանակում:

«ՔՈԱՖ-ի առաքելությունը գյուղական համայնքների կայուն զարգացումն է՝ տեղի ռեսուրսների ակտիվացման և գործարկման շնորհիվ: Զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտի զարգացումը թույլ է տալիս տնտեսական թռիչքային աճ ապահովել: Լոռին բնական և մարդածին հնարավորությունների մի մեծ փունջ է, որի գրագետ և նորարարական շեշտադրումները բերելու են տուրիզմի աննախադեպ աճի: Մեզ համար մեծ պատիվ է այս ոլորտում ևս վայելել Եվրոպական միության և միջազգային հռչակավոր կազմակերպությունների վստահելի գործընկերոջ համբավը»,- ընդգծեց ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանը:**

Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրագործվող դրամաշնորհային մրցույթը համատեղ վարում են ALDA-ն, Համայնքների ֆինանսիստների միավորումը և Հայաստանի համայնքների միությունը: Միջհամայնքային մակարդակում ենթադրամաշնորհների համար դիմած տասնյակ արժանի ծրագրերը քննարկելիս կազմակերպիչները որոշել են կենտրոնացնել ռեսուրսները մեկ տարածքում՝ Լոռու մարզի Դեբետի կիրճում:

ՔՈԱՖ-ի առաջարկած բազմամրցակցային և բազմաօլորտային մոտեցմամբ նախագիծը շահող երկու ծրագրերից մեկն է: Այն միտված է խթանելու զբոսաշրջությունը և բացօթյա հանգստի զարգացումը Լոռու մարզում՝ ակտիվացնելով ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի և այցելուների կենտրոնի ունեցած ռեսուրսները:

«ՔՈԱՖ-ի փորձը Լոռու մարզում հենց տուրիզմի ոլորտում՝ կարողությունների զարգացման, տուրիզմի խթանման, երիտասարդների ներգրավման բաղադրիչներով, մեզ համար շատ արժեքավոր է: Այն հնարավորությունները և ռեսուրսները, որ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ներդնելու է ՔՈԱՖ-ը, թույլ կտան առավել արագ և արդյունավետ ճանապարհներով իրագործել մեր նպատակները»,- նշեց Համայնքների ֆինանսիստների միավորման փոխնախագահ **Աբրահամ Արտաշեսյանը:**



The Project is funded
by the European Union

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076



CHILDREN
OF ARMENIA
FUND



ՔՈԱՖ-ի կողմից իրագործվող ծրագիրն ընդգրկում է երկու լայն ոլորտ.

- ՔՈԱՖ ՍՄԱՐԹ այցելուների կենտրոնի գործարկմամբ մեկնարկ է տրվում համայնքային հյուրատների և տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրերի մասին համապարփակ տեղեկատվության հավաքագրմանը և մշակմանը, ինչպես նաև զբոսաշրջիկներին անհրաժեշտ սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերմանը, որոնք հնարավոր կլինի վարձակալել Մ6 մայրուղու և Հ22 ճանապարհի հանգույցում տեղակայված ՔՈԱՖ այցելուների կենտրոնից:
- Հմտությունների զարգացման ուղղությամբ իր ռեսուրսներն է առաջարկում ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը, որտեղ հարակից Դեբետ, Դսեղ, Ջորագյուղ և Թումանյան համայնքների ընտրված մասնակիցները մարքեթինգի, անգլերենի, տուրիզմի կառավարման 15-շաբաթանոց դասընթացներ են անցնելու:

Պայմանավորված COVID-19-ի բերած սահմանափակումներով՝ կրթական բաղադրիչի իրագործումը կտեղափոխվի 2021 թ. գարուն, իսկ տուրիստական տեղեկատվական նյութերի և սարքավորումների ձեռքբերումը արդեն իսկ մեկնարկում է:

Մանուլի այս հաղորդագրությունը մշակվել է ALDA-ի՝ Տեղական ժողովրդավարական գրասենյակների գործակալություն եվրոպական ասոցիացիայի աջակցությամբ և Եվրոպական միության տրամադրած ռեսուրսներով: Բովանդակության պատասխանատուն «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամն է, այստեղ տեղ գտած մտքերը կարող են լիովին տարբերել Եվրոպական միության կամ ALDA-ի տեսակետից:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնադրոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կղառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:



The Project is funded
by the European Union

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076